

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 10—12

ՀՈԿՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԳԶ. ՏԱՐԻ 1952

### ԿԻՐՐԿՈՍ Վ. ԳԻՏՆԵԿԱՆ

1050°—1127

Պատլախոյի Դպրոցը: Թարգմանութիւնք ֆ Յովհ. Ոսկերեքանի Մեկնութեանց Գործք Առաքելոցի եւ Յովհաննու Աւետարանի: Տօնակաւի խմբագրութիւնը: Կիրակոս վարդապետի Մեկնութիւնն Գործք Առաքելոցի:

#### 1. ՊԱՌԱՆՈՅԻ ԴՊՐՈՅՐ

Երբ յանձնուեցաւ Անի քաղաքը Կոստանդին Մոնոմախին (1045), Գրեգոր Մագիստրոս մտաւ կայսեր ծառայութեան: Իր մէկ թուղթին մէջ կը ներկայացնէ ան ինք զինքը «Վասպուրականի եւ Տարօնոյ եւ Մանգլկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մոնոմախին մագիստրոս, վեստ եւ տուկ» (էջ 213): Կոստանդին Մոնոմախ վախճանեցաւ 1054ին: Գրեգոր կայսեր յանձնած էր իր կալուածներն ալ եւ փոխարէն պարգեւ ստացած Միջագետքի մէջ քաղաքներ եւ գիւղեր (Ար. Լաստ. 42): Գիտենք թէ ան ժամանակ մը գործեց Միջագետք. առ Սարգիս վարդապետ թղթին մէջ կը գրէ ի մէջ այլոց. «Աղէ պետ թղթին մէջ կը գրէ ի մէջ այլոց. «Աղէ հարցիր... զի՞նչ եւ ի Միջագետս եւ կամ որպիսի պատուասիրութիւնս, մանաւանդ եթէ եւ բարձրութիւն մերոյն նահանգի եհաս ի մեծոն իմոյ տկարութեանս» (էջ 65): Դժբախտաբար չէ մատնանշուած մեղի թէ Միջագետքի ո՞ր կողմը յատկապէս շնորհուած են իրեն քաղաքներ եւ գիւղեր: Մագիստրոսի մահը կը նշանակուի 1058ին: Իր որդիներէն մին, Վասակը, կարգուած էր տուկ (duc) Անտիոքի եւ սպանուած 1076ին (Մ. Ուռհ. 213): Իսկ կրտսերագոյնը՝ Վահրամ, իսկ չէի Բ. կաթողիկոսի մահէն ետքը, Կարսի նախկին Գագիկ թագաւորի ստիպմունքի վրայ կ'ընտրուի յաջորդ, Գրեգոր անունով, որ յետոյ յորջորջուեցաւ Վկայասէր: Օձութիւնը տեղի կ'ունենայ ի Ծամնդաւ, որ բերդաբազմ մըն էր Տաւրոսի եւ Անտիտաւրոսի լեռ-

նածորերուն մէջ, կոչուած նաեւ Zamandi եւ Tzaman(d)o: Առ հասարակ ընդունուած է, թէ Գրեգոր իր աթոռն հաստատած էր այս տեղ Գագիկի հովանաւորութեան տակ: Բայց նորագիւտ յիշատակարանները կը վկայեն թէ կաթողիկոսին աթոռանիստն էր Պատլահոյ վանքը, ուր էին, ինչպէս կը գրէ ինքնին, «մեր սեփական պարգեւական եկեղեցիքն», որոնց շինութիւնը Գրեգոր Մագիստրոսի կ'ընծայուի: Պատլահոյ վանքին դերքը մատնացոյց չէ եղած. բայց կ'ըսուի թէ կը զբտնուէր ի ստորոտս Տաւրոսի, Սեւա լեռանց վրայ, որոնք դասականաց քով Ամանոս լեռինք կը կոչուին եւ Տաւրոսական լեռանց մէկ բազուկը կը համարուին եւ կը տարածուին դէպի հարաւ մինչեւ ասորական Միջագետք եւ դէպի արեւմուտք մինչեւ Եփրատ: Միջին դարուն Սեւա լեռինք կոչուեցան, ուր հաստատուած էին մեծաթիւ վանական հաստատութիւններ, բնակուած մեծաւ մասամբ Հայերէ, Ասորիներէ եւ Յոյներէ (Սիսուան, 403—405):

Գրեգոր վկայասէր երբ վերագարձաւ իր երկար ուղեգնացութենէն, «հասաք, կը գրէ 1101ին, ի սուրբ լեռան, զոր Սեւան կոչեն, ի մեր սեփական պարգեւական եկեղեցիքն, յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պատլահոյ կոչեն, որ թարգմանի Դրախտ Աստուծոյ. եւ անդ յ19. ամի մերոյ աթոռակալութեանս» թարգմանել տուի, կ'ըսէ, թէ ուրիստէ հայերէնադէտին Յովհաննէս Ոսկերեքանի վարքը (Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., 285): Այլուր «հասի, կը գրէ (1100ին), ի ստորոտս Տաւրոսի, ի հրեշտակարանի կայարան սրբոցն (իմացիր՝ ի վանս Պատլահոյ) եւ գաի անդ զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս, որդին իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգայ փոխանորդին մեր» (Յովսէփեան, անդ 255): Ասկէ ազդուած, հաւանորէն, կը վիպասանէ ներսէս Շնորհալի (Վիպասանութիւն, էջ 548):



«զհոգեչնորս զիտնականն Կիրակոս, որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ զիտնականին Գէորգայ փոխանորդին մեր»։ Իսկ Կիրակոս երախտագիտութեամբ օրհնած է յիշատակը իր ուսուցչին։ «Ձսուրբ վարդապետն մեր գրէորգ, զգիտապետն Հայոց, զհոգիւն բարի եւ զգաստ եւ մարդասէր հոգին, որ վերստին ծնաւ զմեզ բանին կենաց» (Յիշատ. Գործք Առաքելոցի Մեկնութեան)։ 1098ին Յովհաննէս զրիչ կ'անուանէ Գէորգ Մեղրիկն եւ Կիրակոսը Կաթողիկոսին «ուսուցանակիցներն եւ վարժակիցները»։ որոնք «սուրբ եւ առաքինազարդ» են, «այրք վարժք յաստուածայինսն», «փոյթք յանել յուսուցանել»։ Ասոնց Դպրոցէն ընձիւղած զիտէ ան Գրիգոր վարդապետը, ձեռագրին ստացիչը, որ էր «այր հեղամիտ եւ բարեչնորս, ներհուն մակացութեան արհեստի»։ Սա էր առանց տարակուսի այն Գրիգորիսը, որուն համար խնդրած է Վկայասէր իր Տօնամակի մէջ յիշել «եւ գրիգորիս համանուն իմ եւ համագրի, որ եւ զրիչ եւ յօրինիչ գրոցս»։ Եւ գոր Կիրակոս Կաթողիկոսին «կարեւորն» կ'անուանէ։

Կիրակոս եղբայրական անձուկ սիրով եղբայրացած էր վանքիս մէջ Գէորգ Մեղրիկի հետ։ Կը խնդրէ յիշել Գործք Առաքելոցի Մեկնութեան յիշատակարանին մէջ «եւ զերէց աւուրքք եւ խոհականութեամբ զեղբայրն մեր եւ զանդրանիկ մերոյն կրթալարժ եւ հրահանգայեղց աշակերտութեան՝ զխաչակիրն Գէորգ մականունն Մեղր կոչեցեալն. վասն զի յօրգորիչ եղեւ մեզ իսկզբանն եւ թելաղիւր կատարմանս սորա»։ Գէորգ «երէց էր աւուրքք» քան Կիրակոսը, վասն զի ծնած էր 1044ին. եւ «անդրանիկն մերոյն... աշակերտութեան», վասն զի նոյն դպրոցին թէ աշակերտն եւ թէ ուսուցիչն եղած էր։ Մատթէոս Ուռհայեցի կը գրէ Մեղրիկի համար, թէ ան «զատալին (այլ 22 զամենայն) ժամանակս կենաց իւրոց անցուցեալ էր միայնակեցութեան կարգօք ցամա յիսուն» (էջ 334)։ Իր մահուան տարին է 1114/5. ուստի միայնակեցութեան առաջին տարին կ'իշխայ 1065ին, որ Վկայասէրի կաթողիկոսութեան առաջին տարւոյն կը համապատասխանէ։

Գրիգոր Վկայասէր 1074—1105 տարիներուն բազմաթիւ թարգմանութիւններ կատարել տուած է հայերէնագէտ յոյներու եւ ասորիներու։ Այս թարգմանութիւնները սակայն անթերի չէին, մասնաւորապէս հայկա-

բանութեան տեսակէտէ. կը ներկայացնէին խրթնարանութիւններ, որոնք թէ դժուարիմաց էին եւ թէ դժուարալուր հայ աշակերտին։ Հարթելու համար այս անհարթութիւնները, հարկադրուեցաւ Վկայասէր յանձնել այդ թարգմանութիւնները քաջ հայերէնախօսներու, յիշելու լեզուն ըստ հայ ճաշակին։ Կիրակոս վարդապետին յանձնեց Յովհ. Ոսկերեանի Մեկնութեան Գործք Առաքելոցի եւ Յովհաննու Աւետարանին, զորոնք թարգմանած էին յոյն բնագրէ Կիրակոս հետոր եւ Թէոփիստէ, երկու լայնափոր հատորներ։ Միաժամանակ զանիկա իրեն գործակից եւ օգնական առաւ Վկայասէր Ճաշոց գրքի նոր խմբագրութեան համար։ Ասոնց մասին պիտի անդրադառնամ յետոյ լայնազոյնս։

Կիրակոս անցուց 1101—1105 տարիները հաւանօրէն Կարմիր վանքի մէջ, ուր հաստատուած էր Վկայասէր. իսկ Կաթողիկոսի մահէն († 1105) ետքը գնաց, ինչպէս կ'երեւայ, Ծուղբ անապատ, ուր կը նստէր Բարսեղ կաթողիկոս († 1113)։ Կը պատմուի թէ Բարսեղ կաթողիկոս «առնու ընդ իւր վարդապետս եւ եպիսկոպոսունս եւ այլ եւս ոմանս յիշխանացն եւ յընտիր տանուտէրացն եւ զայ յողջոյն իշխանաց իշխանին Վալարի (ի Քեսուն), ունելով ընդ իւր զգլխաւոր վարդապետսն զՄեղրիկ Սեւանեցիին, որ գրագարկի սահմանն է կարգաւորեալ, եւ զԿիրակոս, (որ) շատ սօճս եւ յիշատակս սրբոց ի Մարտիրոսոքս ճաշագրոցն է յաւելեալ. եւ զայ եւ նոքօք ի մեծ ուխտն սուրբ ի Կարմիր վանքն» (Յովսէփեան, անդ, 305)։ Այս այցելութեան մասին ի Կարմիր վանս՝ յիշատակութիւն ըրած է նաեւ Կարապետ վարդապետ Սարգիս Ծնորհալոյ Կաթողիկեայց Թղթոց Մեկնութեան Նախերգանքին մէջ (Յովսէփեան, անդ, էջ 301)։

Բարսեղ կաթողիկոս եւ Գող Վասիլ իշխանաց իշխան վախճանեցան 1113ին. եւ Գրիգոր Ապիրատեան ընտրուեցաւ կաթողիկոս։ Կ'երեւայ թէ այս միջոցին երկու հարազատները՝ Գէորգ եւ Կիրակոս փոխադրուած էին արդէն Իրազարկ. Յիշատակագիր մը կը գրէ թէ կային հոն «Լուսաւորք ոգւով վարդապետք ի նմա՝ Գէորգ եւ Կիրակոս եւ Իգնատիոս հռչակեալն» (Յովսէփեան, անդ, 341)։ Այն ստոյգ է որ Կիրակոս 1113ին ի Իրազարկ էր. այս տարւոյն Գէորգ գրիչ կ'օրինակէ անոր համար Աւետարան մը (տե՛ս վարը)։ Յաջորդ տարւոյն, 1114/5ին վախճա-

նեցաւ Իրազարկի մէջ Գէորգ Մեղրիկ։ Չանցած 14 տարի՝ վախճանեցաւ նաեւ Կիրակոս վարդապետ եւ թողուեցաւ նոյն վանքին մէջ։ Մատթէոս Ուռհայեցի կ'արձանագրէ իր Տարեգրքին մէջ ի յիշատակ Կիրակոսի տողերս, յամն ԾՀԶ (1127/8)։

«Իսկ ի թուականութեանն Հայոց ԾՀԶ մեռանէր սուրբ վարդապետն Հայոց, որ ասի Կիրակոս, նմանեալ առաջին սրբոցն, ուսեալ զամենայն Կտակադիրսն Աստուծոյ եւ ամենայն խորին քննութեամբ հասու եղեալ, լիապէս հասեալ ի վերայ Հին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ, ընկերակից Գէորգայ վարդապետին, որ ասի Մեղրիկ։ Սա մեռաւ վարդապետին, որ ասի Մեղրիկ Իրազարկ. եւ եւ թաղեցաւ ի վանքն որ կոչի Իրազարկ. եւ կոչեցաւ վանքն այն Գերեզմանատունք սուրբ վարդապետացն. վասն զի անդ թաղեցաւ վարդապետսն Հայոց որ ասի Մեղրիկ, սուրբ վարդապետն Հայոց որ ասի Մեղրիկ, որ ժողովեաց անդ զամենայն զասս ճգնաւոր արցն Բրիստոսի եւ հաստատեաց անդ կարգ եւ կրօնք զառաջին սրբոց հարցն» (էջ 366 սույ. Վաղարշապատ 1898)։

Մահուան տարին Սամուէլ Անեցւոյ Ժամանակագրութեան մէջ (էջ 128) նշանակուած է. «Ի ԾՀ (1121) թվին վարդապետն Կիրակոս կանոնադիրն Իրազարկուն հանգեաւ ի Գրիստոս»։ Անձիւղ է ոչ միայն թուականը, Գրիստոսը եւ Կիրակոսի «կանոնադիրն Իրազարկուն» ըլլալը. այս պատիւը կ'ընծայուի Գէորգ Մեղրիկին։

Յիշատակագիր մը 1123ին ի Իրազարկ կը գրէր. «Որպէս Հոովմայեցւոց քաղաքն ունելով գերկուս արեգակն գՊաւղոս եւ գՊետրոս, սոյնպէս եւ Անապատս այս ունելով գերկուս լուսաւորս՝ զգերակայ վարդապետն Կիրակոս եւ զմականուն վարդապետն Արազարկոս եւ զմականուն վարդապետն Արազարկոս Գրիգոր կոչեցեալ. երկոքին քաջք եւ քայեցի Գրիգոր կոչեցեալ. Երկոքն անհաս եւ զետաքինիք, առաքինութեամբ զամենեսեանս» տուութեամբն գերեզմանոց քան զամենեսեանս» (տե՛ս վարը)։ Իսկ 1113ին Գէորգ գրիչ կը խնդրէ յիշել Աւետարանին ստացիչն «զԿիրակոս տիեզերական եւ գերահռչակ գիտնական» (տե՛ս վարը)։

Հայ գրականութեան մէջ սկսեալ ԺԼ. դարէն Կիրակոս վարդապետ ներկայացուած է իրրեւ «թարգմանիչ» յոշնարէնէ եւ ասորերէնէ։ Այս ըմբռնումը յառաջացած է Յովհաննու Մեկնութեան ձեռագրէ մը, որուն համար Մեկնութեան ձեռագրէ մը, որուն ներկայացուցիչն է Երուսաղէմի թ. 460 յամէ 1691)։ Ձեռագրիս յիշատակագիրը կը խնդրէ յիշել «գորբազան Կիրակոս վարդա-

պետն, որ ... Ասորոց գրէ եւ լեզուէ եւ ի յունականէն քերթողական արուեստիւ թարգմանեալ է ի հայ բառ եւ գիր» (Չարբանանեան, Մատենադարան, էջ 613)։ Նոյնը կ'երեւայ թէ գտնուած է այն երկու հնագոյն ձեռագրերէ մէկուն մէջ, զորոնք ունեցած է Մեկնութեան հրատարակիչն (Կ. Պոլիս 1717, էջ 487)։ Հոս ալ կը խնդրուի յիշել «գորբազան Կիրակոս վարդապետն որ... թարգմանեաց զսա ի յունականէն ի հայ բարբառ եւ գիր»։ Այսպէս նաեւ Ստեփանոս Ռոշթա նոյն Մեկնութեան «թարգմանիչը» գրիչ Կիրակոս վարդապետը (Վիեննա, Յուլիան, էջ 180. իրեն հետեւած է Հ. Յ. Տաշեան, անդ, էջ 1101)։ Հ. Մ. Չամչեան, Պատմ., Գ., 16, 508. «Սորա (Կիր. վարդապետի) է թարգմանութիւն Մեկնութեան Յովհաննու»։ Իսկ էջ 20 կը գրէ ուղիղ՝ Թէոփիստէ թարգմանիչ, Կիրակոս սրբագրող։ Այսպէս ալ Հ. Մ. Աւգերեան, Լիակ. Վարք, ԺԱ., էջ 2թ. ճաշոցի խմբագրին համար կը գրէ. «Սա ինքն է Կիրակոս Վ. թարգմանիչ՝ գործակից Վկայասիրին յամենայնի» (նոյն գործակից Վկայասիրին յամենայնի» (նոյն պէս Աճառեան, Բ., 621—623, Ակիւնեան, Հանդ. Ամս. 1950, էջ 131, 138, 140)։ Quadro, 1825, էջ 35 եւ Somal. էջ 76. ՆՀԲ. Ա. 17 միարերան կը կրկնեն թէ Յովհաննու Մեկնութիւնը թարգմանած է ասորերէնէ Կիր. վարդապետ։

Գրականութիւն

1. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն։ Վաղարշապատ 1898, էջ 366։
2. Սամուէլ Անեցի։
3. Յովհ. գրչի Յիշատակարանն 1098էն. հրատ. Հ. Ն. Ակիւնեան, Հանդ. Ամս. 1930, էջ 561 = Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետի առ վրթանէս Սիւնեաց եպիսկոպոս. Վիեննա 1930, էջ 96—98։ Նոյնը լատիներէն թարգմանութեամբ՝ P. Peeters, Un témoignage autographe sur le siège d'Antioche par les Croisés en 1098: Miscellanea historica in honorem Alberti De Meyer, t. I. Louvain 1946, p. 373—390. Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., էջ 259—260։
4. Մեկնութիւն սրբոց աւետարանին որ ըստ Յօհաննու... արարեալ Յօհաննու Ոսկերեանի։ Կ. Պոլիս 1717։
5. Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. հատոր, Վենետիկ 1784, էջ 16, 20, 34։







տացերոց բարութեանցն սիրելեացն Աստուծոյ հանդիպեալ... ամէն:

= Էջմիածին, Թ. 1315, Թղ. 60ա—454բ (յամէ 1270°: Սկիզբէն թուղթ մը ինկած): 1316 (1288էն: Ներածութիւնն եւ Յիշատակարանները կը պակսին): 1363 (1292էն: Սկիզբէն պակասաւոր. չունի Յիշատակարանները):

Այս երեք ձեռագիրները միայն պահած են Մեկնութեան թարգմանութիւնը: Թ. 1315 (Կար. 1330) կորսնցուցած է բուն յիշատակարանը, բայց ինչպէս մանր յիշատակագրութիւններէն կ'իմանանք, գրիչն է Յակոբ, որուն եղբայրն Կոստանդին «յայտամարտի սպանաւ յանաւրինաց» (Թղ. 454բ). ստացողն է Յովհաննէս արքայեղբայր արքեպիսկոպոս, որ Թղ. 9ա յիշատակագրած է. «Չաստուածատէր եւ գրիստոսագրեաց հարսդ եւ զեղբարսդ իմ ի Քրիստոս աղաչեմ յոքնամեղ դատապարտեալս ոգի Յոհ» եպ" արքայեղբայր Հայոց որ եւ բարուն, յիշել հանապազ զծնուդան իմ եւ զեղբարսն եւ զերեսն ամենայն թագազնեա տոհմայնաւքն մեր...: Յոյժ փափաքմամբ գրեցի ինչ ինչ մեղսակարկամ ձեռամբս իմով. եւ է զոր այլոց ետուրել տաժանելի կրիւք... Ի դառն եւ ի վշտալի եւ տխրալուկ աւուրսս, յորում նեղիմ յընդանեաց իրր ի թշնամեաց եւ վշտագնիմ ի սիրելեաց իրր յատեիաց. որոց եւ յիշողացդ զմեզ ի բարի Քրիստոս Աստուած ողորմեացի միշտ. ամէն»: Յակոբ գրիչ մը ի Սիւ ծանօթ է 1274էն (British Museum, Cod. arm. 40, Conybeare, Catalogue, p. 85): Մետրոպ. Վ. Տէր-Մովսէսեան, Արարատ, 1897, էջ 330—331, խօսած է ձեռագրիս վրայ, ուր կը համարի, թէ Մեկնութեան միակ ծանօթ օրինակն ըլլայ այս, գրուած ընդմէջ 1259—1272 տարիներու: Յովհ. Արքայեղբար վախճանեցաւ 1290ին: Երեք ձեռագիրներն ալ ԺԳ. դարու վերջին քառորդէն են:

Հասակոտորներ:

- 1. Յովհաննու Ոսկերեանի ի Գործոց Մեկնութեան:
- Բազմաց անգիտելի է մատենան...
- ՎՋ. V. 208. մատչէր ի քառութիւն ամենայն ժողովրդեանն եւ մի քահանային:
- V. 220. վասն այսորիկ ոչ վազվազակի առաքէ զ... ոչ, այլ ի Պենտակոստէն:

W. 47. գերկրաքարչս յարութեան հաւանեցուցանէին:

= Վենետիկ, 208, 76բ—91ա (ԺԲ/ԺԳ. Յուցակ, Բ., էջ 178—179: 220, 21ա (1836. Յուցակ, Բ., էջ 306): Տօնական Զ. 564: Տօն. Գ. 168: Տօն. Բ. 307: Տօն. Ե. 119: Երուսաղէմ, 1250, 275ա—283ա (ԺԳ): Վիեննա, 47, 145բ—146բ (1725):

= Montfaucon IX, 1 (hom. I.)

2. սկ. Զրանն առաջին: Տես գերանելի աւետարանչիս խոնարհութիւն. զի ոչ սասց թէ զառաջին աւետարանն զոր գրեցի:

= Վիեննա, 47, 148բ—159բ (քաղուածարար):

= Montf. IX, 4 (hom. I.)

3. Յովհ. Ոսկերեանի ի Գործոց Մեկնութեան. Եփրեմի եւ Սարկաւազին ասացեալ ի Հոգին սուրբ: Ի կատարել աւուրն պենտակոստէի...

= Վենետիկ, 208, 100բ—105ա (Յուցակ, Բ., 179): Տօնամակ Զ. 627:

4. Ոչ վայրբանակս, այլ պարզամիտս...

= Վենետիկ, Յաճախապատում, Բ. օրինակ (յամէ 1625. Թուղթ մի բան):

5. Ստեփանոս այր լի շնորհօք: Տեսանե՞ս թէ որպէս առ Եօթանն նա էր նախապատուեալ...

ՎՋ. եւ եթէ ամենեքեան նախահարքն ի նուրութիւն եւ ի չար կիրս էին:

= Հրա. Յովհ. Ոսկերեանի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի. հատոր Բ. (Վենետիկ 1862), էջ 569—572:

= Montf. IX, 119—121 (hom. XV.):

6. Եւ արդ եթէ մեծազուներն եւ սքանչելի արանցն մեծ էր նեղութիւնն...

ՎՋ. Արդ հաւանեցուք սմա զի առողջ լինելով զործեսցուք զոր ինչ պարտ է առնել ի Քրիստոս Յիսուս...:

= Հրա. անդ, էջ 573—578:

= Montf. IX, 151—153 (hom. XVI):

7. Յովհ. Ոսկերեանի ի Գործոց Մեկնութեանէ յաղագս Յակովբայ եղբօրն Յովհաննու:

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ: Սովորութիւն է Գրոց զկարգս ժամանակաց եւ թագաւորաց պահել...

ՎՋ. որք հաղորդին նորա չարչարանացն:

= Պարիս, 114, 29բ—31բ (1355): Վենետիկ, Տօնամակ Զ. 117: Էջմիածին, Կարենեան, Յուց. 892, Ե.: = Montf. IX, 207 (hom. XXVI):

7. Գէորգ Լաւրբոնացոյ խմբագիր Մեկնութիւն Գործոց Առաքելոց:

Յովհաննէս արքեպիսկոպոս Արքայեղբայր իրր 1275ին օրինակել տալով իրեն համար Ոսկերեանի Գործոց Մեկնութիւնը, զրաւ զայն ապա Գէորգ Վ. Լամբրոնացոյ տրամադրութեան տակ, որպէս զի կազմէ համառօտ խմբագրութիւն մը, օգտուելով նաեւ Ս. Եփրեմի Մեկնութիւնէն եւ այլ աղբիւրներէ: Այս խմբագիր Մեկնութիւնը, որ 1290էն յառաջ յօրինուած ըլլալու է, այսինքն Արքայեղբօր կենդանութեան, գտած է ժամանակակիցներու եւ յաջորդ սերունդին քով մեծ ընդունելութիւն: Ունինք մեծ թուով ձեռագիրներ: Այս օրինակներէն ոմանք լուծ են խմբագրին անունը: Այսպիսի օրինակներն ունեցած են իրենց տրամադրութեան տակ Վենետիկի Միլիթարեան Հայրերը. որոնք Վենետիկի Միլիթարեան խորագրիս հրատարակեցին Մեկնութիւնս խորագրիս հրատարակելու նախնեաց յովհերեմէն. «Մեկնութիւն Գործոց առաքելոց իմմա յեփրեմէն». Վենետիկ 1839, 8<sup>0</sup>, էջ 460:

Ձեռագիրները կը խորագրեն. «Ի Գործոց առաքելոցն բուն եւ ընդարձակ Մեկնութեանց սրբոցն տեան Եփրեմի եւ երանելոցն Յովհաննու Ոսկերեանի այս համառօտ շարահանգս, որպէս եւ տեսցես առնթեր բանիցն յանձնիւր տեղւոյ զորչմեալ զանունս Սրբոցն. հրամանաւ տեան Յովհաննիսի աւուածապահ ուխտին Գոնեղոյ առաջնորդի»: Այսպէս առ հասարակ հնագոյն եւ նորագոյն ձեռագիրներու մէջ: Կը տեսնուի, թէ խմբագիրը չէ յիշատակած իր անունը վերադրելու մէջ. նաեւ չէ գրած Յիշատակարան վերջարան: Հնագոյն ձեռագիրը, որ ինձի ծանօթ է, գրուած է խմբագրին կենդանութեան 1292ին, Խորին անապատի մէջ ի ձեռն Յովհաննէս Երզնկացոյ: Իր յիշատակարանին մէջ կը գրէ Երզնկացի. «Աւարտեցաւ Մեկնութիւնս Գործոց Առաքելոցն, զոր համառօտեալ հաւաքեալ էր աշխատատէր եւ մատուցեալ վարդապետ Գէորգ» (Տրդատ աղբիւրական վարդապետի Գէորգ) (Տրդատ եպ. Պալեան, Յուցակ Ս. Կարապետի վանաց նոր Մատենագարանի ի Կեսարիա, Թ. 35. անտիպ):

Ուրիշներ ունին. «Պատճառ Գործոց Առաքելոց ի Գէորգայ Լամբրոնացոյ ի համարիս, 114, 29բ—31բ (1355): Վենետիկ, Տօնամակ Զ. 117: Էջմիածին, Կարենեան, Յուց. 892, Ե.: = Montf. IX, 207 (hom. XXVI): 7. Գէորգ Լաւրբոնացոյ խմբագիր Մեկնութիւն Գործոց Առաքելոց: Յովհաննէս արքեպիսկոպոս Արքայեղբայր իրր 1275ին օրինակել տալով իրեն համար Ոսկերեանի Գործոց Մեկնութիւնը, զրաւ զայն ապա Գէորգ Վ. Լամբրոնացոյ տրամադրութեան տակ, որպէս զի կազմէ համառօտ խմբագրութիւն մը, օգտուելով նաեւ Ս. Եփրեմի Մեկնութիւնէն եւ այլ աղբիւրներէ: Այս խմբագիր Մեկնութիւնը, որ 1290էն յառաջ յօրինուած ըլլալու է, այսինքն Արքայեղբօր կենդանութեան, գտած է ժամանակակիցներու եւ յաջորդ սերունդին քով մեծ ընդունելութիւն: Ունինք մեծ թուով ձեռագիրներ: Այս օրինակներէն ոմանք լուծ են խմբագրին անունը: Այսպիսի օրինակներն ունեցած են իրենց տրամադրութեան տակ Վենետիկի Միլիթարեան Հայրերը. որոնք Վենետիկի Միլիթարեան խորագրիս հրատարակեցին Մեկնութիւնս խորագրիս հրատարակելու նախնեաց յովհերեմէն. «Մեկնութիւն Գործոց առաքելոց իմմա յեփրեմէն». Վենետիկ 1839, 8<sup>0</sup>, էջ 460:

մատուցող վարդապետէն, ի քրեւորդոյ Մեծին Գրիգորի Սկեռացոյն ասացեալ»: Կը յաջորդէ Ընծայականը. այսպէս էջմ. 1449, 127բ (1656): Թորոս Աղբար, Բ. էջ 393 (ձեռագիրն 1310էն): Չայս կը հաստատէ նաեւ ժամանակակից մը Յայտմաւորքին մէջ. թէ Գէորգ Լամբրոնացի «անէր եւ Համառօտ Մեկնութիւն Գործոց Առաքելոցն հրամանատեան Յովհաննու արքայեղբօր, որդւոյ Կոստանդեաց թագաւորահօր». Վիեննա, Թ. 7, Թղ. 594բ (համ. Զարբանեկեան, Հին դար., էջ 601): Մետրոպ. Վ. Տէր-Մովսէսեան, Արարատ 1897, էջ 331, կը յիշէ օրինակ մը, գրուած 1288ին. բայց չէ նշանակած ձեռագրին ոչ տեղն եւ ոչ ալ համարը: Յառաջըրեւելեան կը տեսնուի սակայն, թէ կ'ախարհէ էջմիածնի Թ. 1316, որ Ոսկերեանի Մեկնութիւնն է, ինչպէս նշանակեցինք վերագոյն:

Այս տեղ Գէորգ Լամբրոնացի հետեւած է մասնաւորապէս Ոսկերեանի Մեկնութեան, այնպէս որ, ինչպէս ուղիղ նկատած են Նոր Հայեազնեան Բազմաբնի հեղինակները, բովանդակ զործին մէջ կ'ելիւք «զարձեալ բուն ոգին Ոսկերեանի» (անդ, էջ 17բ):

4. ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ Ի ՁԵՆՈՒ ԹԷՌՈՒՍԷՒԻ

Յովհաննէս Ոսկերեան Մատթէի Մեկնութեանէն ետքը ձեռնարկեց մեկնել, նոյնպէս ճառօրէն, Յովհաննու աւետարանը, զոր ի գլուխ հանեց 88 (87) ճառերու մէջ, խօսած 389ին Անտիօք Յոյն բնագրին ընտիր հրատարակութիւնը հոգացած է Montfaucon Ոսկերեանի Գործոց Ը. հատորին մէջ (Պարիս, 1728, էջ 1—542: Նոյնը Migne, P. G. t. 59:

Մեկնութիւնս թարգմանուած էր Ե. դարու առաջին կէսին, ասորի թարգմանութեան մը: Կիրակոս վարդապետ հետամուտ եղած է վերհանել զայն վանական գրադարաններու մէջ. բայց յաջողած է միայն առաջին 13 ճառերը գտնել: Իր պրոպագանդայի ժամանակ երեւան բերած է նաեւ Մեկնութեանս երկրորդ թարգմանութիւն մը, այս անգամ յուրարէն թարգմանութիւն մը, կը յիշէ յանունէ ժԳ—ԼԳ ճառերը: Այս ճառերը գտած է մէկէ մէկ Երզնկայի եղծուած ձեռագիրներու մէջ, զորոնք բազմաթիւ իրարու հետ, ստացած է վերականգնուած օրինակ մը: Ինքը հաւատացած է, թէ նախնիք թարգմանած էին ամբողջը:



երանելի պատրիարքին Կոստանդինուպուլսի տիեզերակեցոյց աշխարհալոյս վարդապետի Ոսկեբերան կոչեցելոյ մականուամբ, որպէս վերագոյնը առ նա արարեալ իմ Կիրակոսի գրանս մաղթանաց: Վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեան:

Արդ ունկնդիր եղեալ ինձ՝ թողեալ զԱնգրիաս երէց ասորի զթարգմանիչ, յիչ ի Միսապալատամն գաւառ առ յունականն հետոր թէոփիստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պատոյնաւտար իշխանին Առաւնն կոչեցելոյ: Եւ բազում ծախիւք, առատատուր պարգեւաք նա ետ թարգմանել զսուրբ զիրս: Եւ արդ նա ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանս՝ բազում ճառք մնացին անթարգման. յոր ես ձեռն արկեալ նոյնպէս առատարար ճրիւք զմնացեալսն ետու աւարտել նմին առն:

Եւ է ճառիցս թիւ զոր նորոգ ի յայտ ածաք, յիսուն եւ հինգ ճառ: Քանզի զերեսուն եւ զերիսն բազում յուզիւք առաջին մերոց թարգմանչացն զտաք թարգմանեալ. ի սկզբանն տասն եւ երեք ճառ յասորի լեզուէ. բանքն իսկ ցուցանեն. իսկ քսանն ի յունականէն, որ են երեսուն եւ երեք ճառ: Բովանդակն էր լեալ զիրքն թարգմանած ի հայս. եւ ի ծուլութենէ եւ յանոյթ առնելոյ՝ այլքն կորուսեալ եղծեալ էին յաւրինակս հինս ուր եւ կայր. եւ այս զոր զտաք, ի յախմար եւ ի ազէտ խաւարած զբազրերոյ այլայլած եւ թիւրած էր բանքն եւ տունքն եւ աւելի եւ պակաս, անազուտ ի կարգալոյ եւ յիմանալոյ. զոր իմ Կիրակոսի տրպի եւ անարժանի ի ձեռն առեալ ուղիղ յաւրինեցի ըստ մտաց բանիցն եւ այլ ի կրկին աւրինակաց. եւ ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում ջանիւ եւ աշխատութեամբ յերկրեցաք յուզիղն բառ եւ բան ըստ մերումս զհատակոտոր եւ զխրթին բանսն. եւ ըստ վերագոյն զրեւոյցն ոչ աւելի եւ ոչ պակաս:

Արդ այսպէս գրեցաք եւ տուաք վերջին աւուրց վերջին դարուս. յորում ըստ կանխասացութեան Փրկչին եւ առաքելոց նորա շար եւ դժնդակ են աւուրքս: Սատանայ թաւաւորեալ, սէր եւ հաւատք եւ ճշմարտութիւն բարձեալ յամենայն մարդկանէ: Քանզի բոլոր տիեզերք զնացին զհետ սատանայի, է որ անհաւատութեամբ եւ է որ հերետիկոսութեամբ եւ է որ մեղաւք, յոր թուլացան անհասարակ եւ մերս ազգ հաւատաւք եւ կարգաւք ուղիղ եւ գործաւք ըստ բանասար-

կուին կամաց հետեւեալք եւ հեռացեալք յերկնաւոր կոչմանէն: Նաեւ բարձրացեալ յերկրէ աստիճանաւ կրանաւորք եւ քահանայք ընդ այլ չարահաւատ ազգս նախանձեալ ի մարմին դարձան եւ ի կամս նորա, աւտարացեալք ի կոչմանէն Քրիստոսի: Այլ եւ յանիշխանութեան գոլով տիեզերք. քանզի կարծեալքն իշխանք ի սուր եւ յաւեր դարձան յերեարս. եւս եւ որ թագաւորք անուանէին: Եւ մեք ի սոյն աւուրս աշխատեալք նորոգեցաք զսա եւ տուաք ի յիշատակ աստուածապէր եղբարց սրբոց. թերեւս անձանց եւ բազմաց աւգուտս գործիցեն: Որ եւ հովացեալք եւ ցրտացեալք եղեն բնաւք ի պատուիրանաց Աստուծոյ եւ ի սիրոյ գրոց:

Չայս գրեցաք, զի որք ընթեւնուցուն իմացեալք զմերս եւ զսուրբ Դիոնապետիս ջանս, ըստ այսմ ի Փրկչէն հայցեցէք զոգորմութիւն նորա: Ընդ որս եւ զսուրբ վարդապետն մեր զԳեորգ. . . յիշեալիք աղաւթիւք»:

Այս հատուածը՝ «Ընդ որս — աղաւթիւք» ստուած է բառ առ բառ Գործք Առաքելոցի Յիշատակարանէն:

\* «Եւ որ զԳեորգս գրեցի հրամանաւ սուրբ աստուածարեալ վարդապետիս Կիրակոսի, որում Յիշատակարանս է եւ բովանդակ Գեորգս յաւրինեալ եւ յարմարեալ ըստ տանց եւ ըստ ամենայն արհեստից պատշաճեալ, զիւրահաս ընթերցողաց եւ լսողաց: Թէպէտ եւ խոչոր է զիրս եւ անարհեստ եւ ակամար գրիչս, բայց աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս զբազմամեկս Ստեփաննոս կոչեցեալ եւ զեղբարս իմ, որպէս զի աղաւթիւք ձեր եւ ամենայն սրբոց հաճոյացելոց Տեառն ի սկզբանէ, գտցուք միարան արժանաւորք կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ընդ որում Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եր թիւ ի սկզբանցն արարչութեանց ի մեզ ՅՇԼԶ ամ, իսկ ի կենարար զալստենէն ՌՃԺԲ ամ:

\* Իսկ ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց ՇԿԶ. իսկ ըստ աւարտման առաջին շրջանին, ՇԼԲ նորս սկսեալ շար ամաց, ԼԴ ամ:

Այլ եւ զաղաչանս իմ զվերջին ընկալլիք սիրովն Աստուծոյ. զկնի վախճանի իմոյ ում եւ տայ Աստուած ի ձեռն իմ զսուրբ զիրս գայս, մի արդելցէ տալ զսա աւրինակ՝ ով եւ կամեցի զրել, զի տարածեցի եւ մի ի մի

փակեցի խաւքս Աստուծոյ: Եւ որք գրել տայցեն, գրեցեն եւ զյիշատակարանս զայս բովանդակ ի նմին. եւ մի հատցեն ի սմանէ բան մի: Եւ որք զերկու խնդիրս իմ կատարեցեն, գրեցէ զնոսա Աստուած ի գարութեան կենաց: Իսկ որք ստուենգանն, մի գրեցէ զնոսա Աստուած ի գիրն կենաց յաւիտենից: Եւ Տէր Աստուած աւրհնեալ եղիցի յանբաւ յաւիտեանս. ամէն:

\* Մինչ զայս գրեցի թիւ նոր տոմարիս ամաց. ԼԷ. էր ընդ հինգհարիւր երեսուն եւ երկուցն ի սկսմանէ»:

Ձեռագրիս օրինակողն է Ստեփանոս, որ գրած է Կիրակոսի հրամանով: Իր գրչէն են Յիշատակարանիս մէջ աստղանիշ հատուածները:

= Էջմիածին, 1347, թղ. 414ա—418ա (յամէ 1332): Հրատ. Յովսէփեան, Յիշատակարանք Ձեռագրաց, Ա., էջ 309—318: Հրատ. Մեկնութեան Կ. Պ. 1717, էջ 957—967: Հմմտ. Չարք. Մատ. 611—612:

Այստեղ նկատի առնուած են. ա. Թուական ի սկզբանց արարչութեան ՅՇԼԶ (6536), որ կ'ենթադրէ ամն նախ քան զՔրիստոս 5425, ուստի յետ Քրիստոսի 1111:

բ. Թուական ի կենարար զալստենէն Քրիստոսի ՌՃԺԲ (1112): Այս ամն Քրիստոսի պէտք է իմանալ 1112—1=1111:

գ. Թուական ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ (այն է Հայկական թուասկանը սկսեալ 552էն) ուստի ՇԿԶ + 551 = 1117/8:

դ. Թուական «ըստ աւարտման առաջին շրջանին ՇԼԲ՝ նորս սկսեալ շար ամաց ԼԴ» որ յետոյ կոչուած է «նոր տոմար», որուն սկիզբն է 1084, ուստի 1083 + 34 = 1117/8:

ե. «Թիւ նոր տոմարիս ամաց ԼԷ. այսինքն 1083 + 37 = 1120/21: Այս տարւոյն կաւարտի ձեռագրիս օրինակութիւնը է ձեռն Ստեփանոս գրչի:

Այս ա—դ թուականները իրարու հետ անյարիր են. որովհետեւ Ստեփանոս գրիչ Կիրակոսի Յիշատակարանին մէջ մուծելով Կիրակոսի Յիշատակագրութիւնը՝ նախկին Յիշատակարանին գ եւ դ թուականները յարմարեցուցած է զոյգն փոփոխութեամբ իր գրչութեան (1117/8): Նախ սկզբնաւորութեան տարւոյն (1117/8): Նախ սկզբնաւորութեան տարւոյն է՝ գ. ՇԿ եւ դ. ԻԼ: նաբար եղած ըլլալով է՝ գ. ՇԿ եւ դ. ԻԼ: Ստեփանոս անփոփոխ պահած է ա եւ բ

թուականները, վասն զի անտեղեակ եղած է անոնց գործածութեան:

Դրութեան տեղը չէ յիշուած: Հաւանորէն գրուած է Դրագարիկ, ուր անցուցած է Կիրակոս իր վերջին 15 տարիներն եւ ուր կ'այլէր տակաւին Գեորգ Վ. Մեղրիկ (+ 1114):

Վերագոյն առիթ եղաւ յիշելու թէ Մեկնութեան օրինակողներէն մէկը անհասկացողութեամբ այն գաղափարը կազմած է թէ «սրբազանն Կիրակոս վարդապետ բազում աշխատութեամբ եւ ըզձափափազ տենչմամբ յԱսորոց գրոյ եւ ի լեզուէ եւ ի յունականէն քերթողական արհեստիւ թարգմանեալ» է Մեկնութիւնս «ի հայ բարբառ եւ ի գիր» (էջմիածին, Թ. 3816, հմմտ. Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., 319—320 եւ այլն), որ ապա ձեռագրէ ձեռագիր անցած է եւ շիտթուցած միամիտ ընթերցողները:

Ստեփանոս Ռոշքա կը գանչ թարգմանութիւնս «թերի եւ սխալութեամբ լի», նկատելով թէ Կիրակոս «ոչ էր հմուտ Յունաց լեզուին, այլ օգնութեամբ յոյն մեկնողին գրէր, որպէս ինքն վկայէ» (Վիեննա, Թ. 266. Տաշեան, Յուցակ, էջ 680): Նաեւ Ռոշքա ուշադրութեամբ կարդացած չէ Յիշատակարանը:

Մեկնութեանս ձեռագիրները: Էջմիածին, Թ. 1347 (1332): 3816: 4119: 4138 (1696): Երուսաղէմ, Թ. 206 (1682): 412 (1828): 460 (1310): 717 (ԺԷ): Վենետիկ, 2 նոտրագիր օրինակներ, մին 1692էն: Ագուլիս, Ս. Թոմայի վանք (Աղգ. Հանդ. ԺԲ., 169): Վիեննա, Թ. 227 (ԺԹ. Թերակատար, Յուցակ, 586):

Կան բազմաթիւ հատակոտորներ ձառընտիրներու եւ Տօնամակերու մէջ. կը յիշեմ տպագրին կարգով.

1. Տեառն Յովհաննու Ոսկեբերանի ի Յովհաննու Աւետարանին Մեկնութենէ: Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս անուն ի Բեթանիա... Բազումք են ի մարդկանէ, որք յորժամ տեսնիցեն զամանս, որ սուրբք եւ հաճոյք են Աստուծոյ... ՎՉ. այլ առ նախնաձու չարութեան իւրեանց զժողովուրդն շարժել կամէին, զի ի մահ մտնեցեն զնա: = Պարիս, 110, 300բ—304բ (ԺԲ.): Տիւրինդէն, 39, 156բ—163 (ԺԶ): Վենետիկ, Թ. 202, 272բ—277բ (1637): 212, 330ա (ԺԳ.): 228, 130ա (1847 = Երևան 78): 296, 28ա (1820): Վիեննա, Թ. 2, 1ա—3ա





= Նոյնը հրատարակուած է. Հ. Մ. Աւագրեան, Լիակատար Վարք, ԺԱ., Յաւելուած, էջ 2է—2Թ: Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ, Բ., էջ 1209—1210 (1846): Չարր., Մատենադարան, էջ 722—724: Հայագատում, էջ 351—352: Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., 269—272:

6. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԸ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԳՐԶԵՆ (ԱԻՇՏԱՐԱՆ 1113ԷՆ)

Հետեւեալ Յիշատակարանը գրած է Կիրակոս վարդապետ 1113ին Աւետարանի մը մէջ, զոր օրինակած է ընտիր ձեռագրէ մը, իր յանձնարարութեամբ, Գէորգ զրիչ ի Դրագարկ: Ո՞վ է այս Գէորգ զրիչ: Այս տարւոյն Դրագարկ կը գտնուէր Գէորգ Վ. Մեղրիկ, իբր 70ամեայ հասակին: Երբ կը գրէի Վարդապետի կենսագրութիւնը, միտած էի այն կարծիքի թէ նոյն ըլլայ զրիչս համանուն Մեղրիկի հետ: Բայց որովհետեւ Կիրակոս օրինակողը պարզապէս «Գէորգ զրիչ» կը ներկայացնէ, առանց մտերմական-ընկերակցական արտայայտութիւններու, զոր պիտի չինայէր, եթէ Մեղրիկն ըլլար, այս պատճառով լաւագոյն է ճանչնալ զանիկա արուեստով զրիչ մը, որ ծաղկած է Դրագարկի մէջ Մեղրիկի եւ Կիրակոսի հովանաւորութեան տակ:

Այս Յիշատակարանին կից պիտի տամ երկրորդ մ՞ալ, որ գրուած է նոյն վանքին մէջ 1123ին, երբ տակաւի կենդանի էր Կիրակոս եւ կը յիշուի գովութեամբ:

Գիր յիշատակի Աւետարանիս:

Կամաքն Աստուծոյ Հաւր կենդանւոյ եւ կամաղի յամենայնի եւ միածնի Որդւոյ իւրոյ կենարարի մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ կենդանարար եւ երկրպագելի Հոգւոյն սրբոյ:

Ես Կիրակոս ի վերջ հասեալ գիտնակաւնաց, մեղաւոր եւ անարժան ծառայ Աստուծոյ, ցանկացաւ եղէ այսմ լուսայիղձ եւ կենսակիր կտակիս. եւ ետու աւարտել Գեորգայ զրիչ ի ստոյգ եւ յ(ը)նտիր գաղափարէ սրբոյն Սահակայ թարգմանչի՝ յստակ եւ ահանակիտ որպէս եւ ի Փրկչէն ասացան. զոր յոյժ բաղձանաւք եւ յոգնատոջոր տենչանաւք մեծաւ աշխատութեամբ ստացայ զսայ ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ եւ յիշատակ ինձ եւ ծնաւոյցս իմոց եւ ամենայն բնաւ զարմից կենդանեաց եւ ննջեցելոց:

Արդ ո՞վ սուրբ հարք եւ ճգնազգեաց կրանաւորք եւ առաքինադուժար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ եղեմատունկ վտակաց քառառաջեա հոսանաց կենդանական աստուածախաւս աւետարանական բանիցս, մանաւանդ յորժամ բառնայք ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յողջոյն ձեր իջանելով զաւրք հրեշտակաց եւ սքողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, յայնժամ նովին սուրբ Աւետարանաւդ եւ միջնորդական կենարար հ(րա)շիւք սուրբ պատարագին յիշեսլիք զստացողս սորին ողորմութիւն գտանել յահեղ աւ(ու)րն համառաւտի ընդ ամենայն սուրբս ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ:

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի հրեշտակալու մենաստանիս Դրագարկիս, առաջի սուրբ Աստուածածնիս եւ սուրբ եղբայրութեանս ի միջիս, ի ՇԿԲ. Թուականիս հայկական ազգիս, ի թագաւորութեան Յունաց Աղէքսի երկարնակի, եւ ի կաթողիկոսութեան Հայոց Բասղի եւ յաջորդի նորուն Գրիգորի ի փառս Քրիստոսի:

Աղերսական բանք եւ մաղթանք վարդապետիս առ սուրբ Աւետարանս:

Ով հրաշափստ եւ երջանիկ երկնաւոր հրեղէն դասուն զարմանալի անբաժանելի ծոցածին Հաւր Բան եւ համազոյգ Հոգւոյն կամաղի, որ ի ստորինս ասեմ իջեալ ընդ մեղաւորս խաւսեցար, եւ կալով առաջի քո մեղաւորաց առ քոյդ սիրոյ սրբեցան:

Քանդի եւ ընդ պոռնկին կարգ բանի եղեալ բարւոյ ի բաց ոչ մերժեցեր, եւ գճանանացին անհամարձակ դիմաւքն ամեր ի լրութիւն հաւատոյ եւ զկարկամեալն կանգնեցեր, վասն զի Աստուած գոյով իմ Յիսուս, քղանցիւք զքանցեալն յարեմէ բժշկեցեր. եւ զքանչին Սիմոնի գառժամայն փրկութիւնն հասուցեր, առատ աղբիւր առ Սամարացին հոսեալ. հեղցիս յանարժանս ծառայս Կիւրակոս զգթութեանդ վտակս. եւ մի տար, Տէր, զատ ընդ ծառայի քում, որ ոչս արդարանամ, այդ մաղթանաւք Մաւր քո, Քրիստոս, գմեղաց իմոց զլուծն խորտակեա եւ քաւեա զիս զյանցաւորս, որպէս զի ջնջան ամաւթոյ մեղացն գտից զվտակս արտասուաց եւ կացից ի դասուն քո, Քրիստոս Աստուած մարգասէր: Եւ զոր անաւոր լուժայս եւ նուրբ խերեւեչս մատուցի, Տէր, ընդ այրոյն ընկալ, զի առ քեզ եւ ի քեզ ետու զի(ս) եւ իմոյ կենացս փրկանք դու ես, Քրիստոս Աստուած

իմ, որ աւրհնեալ ես ընդ Հաւր եւ Հոգւոյն սրբոյ յաւիտեան. ամէն (Թղ. 20ա—22ա):

Թղ. 23բ. «Չստացիչ սրբո Աւետարանիս՝ զԿիւրակոս սուրբ վարդապետ յիշեսլիք ի Քրիստոս»: Թղ. 102բ. «ՉԿիւրակոս տիեզերական եւ գերահոգակ գիտնական զ յիշեսլիք ի Տէր»: Թղ. 145ա. «Քրիստոս Աստուած շնորհաւոր արասցէ զսուրբ Աւետարանս սուրբ վարդապետին Կիւրակոսի. ամէն»:

— էջմ. Նոր ժողովածու, Թ. 1304: Յովսէփեան, Յիշատակարանք Չեռագրաց, Ա., էջ 320—322:

7. ԹԱՌԷՆՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հետաքրքրական է Յիշատակարանս ոչ միայն իբրեւ աստուածարանական շարադրութիւն մը Դրագարկի Դպրոցէն, ուր կ'ուսուցանէր Կիրակոս վարդապետ, այլ եւ իր նորութիւններով Դրագարկի պատմութեան համար:

1. Անձանօթ էր մեզի Դրագարկի դերքը. այժմ կ'իմանանք, որ շինուած էր ան «լիւսայտ» վայրի մը վրայ, «առ ստորոտով նապատ» լայրի մը վրայ, «առ ստորոտով լերինն Տաւրոսի, որ է մերձ յանմատոյց աւուրն, որ յունական լեզուաւ կոչիտառայ անուանի»:

2. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 234, Դրագարկի առաջնորդներ նշանակած է 1113—1127 տարիներուն. Գէորգ Մեղրիկի 1113. Եւ Կիրակոս Գիտնական վարդապետի 1113—1127: Գիտնեք, թէ այդ տարիներուն Դրագարկ կը գործէին Գէորգ եւ Կիրակոս վարդապետները, բայց թէ անոնք վանքին առաջնորդութիւնը վարած են, չէ յիշուած: Այժմ կը հաղորդէ մեզի թագէտս զրիչ, թէ 1123ին, ուստի Կիրակոսի կենդանութեան, իմանքին առաջնորդն է իր եղբայրը «տէր Յովհաննէս ընտրեալ քաւչապետ», որ անշուշտ 1123էն ետքն ալ ժամանակ մը շարունակած է իր պաշտօնը:

3. Նոր անուն է մեզի համար «Գրիգոր Վ. Արքայեցի», անշուշտ ըլլալով ծագմամբ Մովկայ «Արքայից գաւառէն»: Ան կը գովուի իբրեւ սրբակեաց եւ գիտուն վարդապետ:

«Փառք երբց անբաւից, անհասից, անիմանալեաց, միայնոյ ամենակալ անսկզբան՝ ամենից իսկզբնողի նախիսկզբան եւ անժամանակի եւ ժամանակաց արարողի, անեղբիւ աներբի՝ և երբցս արարողի, աննիթի եւ

զաննիթ արարածս նիւթաղի. անսահմանի եւ զամենայն սահմանողի, անմերձ յեղելոցս եւ առ ամենեսեան հուպ, անբաւի՝ և անկարաւորի, անխառն եւ անորիչ, սրբում պարզի, եզարուն եռանձեան աստուածութեանն պատիւ այժմ եւ յանձերանալի յաւիտեանս ամէն. արդար եղիցի, եղիցի:

Յամի Շ.որդի Հ.երրորդի Երկրորդի (1123) Թուարեութեանս Հայոց, ես նուստ քահանայ թագէտս ցանկացաւ եղեալ աստուածախաւս մատենի սրբոյն Եւազրեա միայնակեցի միանգամայն եւ վարդապետի եւ գրեցի զսա մեծաւ ջանիւ եւ աշխատութեամբ ի լեռնապատ անապատիս որ անուն Դրագարկ յորջորջի առ ստորոտով մեծի լերինն Տաւրոսի, որ է մերձ յանմատոյց աւուրն որ յունական լեզուաւ կոչիտառայ անուանի: Չի որպէս Հովմայեցւոց քաղաքն ունելով զերկուս արեգակն զՊաւղոս եւ զՊետրոս, սոյնպէս եւ անապատս այս ունելով զերկուս լուսաւորս զգերակայ վարդապետն Կիրակոս եւ զմահանուն վարդապետն Արքայեցի Գրիգոր կոչեցեալ, երկօրին քաջ եւ առաքինիք, առաքինութեամբ անհաս եւ գիտութեամբն գերիվերոյ քան զամենեսեան, զոր եւ մեր սիրող եղեալ աստուածային գրոյս եւ սուրբ վարդապետս զաւրիտակս շնորհեաց:

Ստացայ զաստուածաշնորհ եւ զպատուական եւ զճանկալից բուրաստանս, որ ունի ամբարեալ ի գաւիթս ծոցոյ անձկութեան իւրոյ զվսեմական գանձունակ ոսկէնման բանք սրբոց մարգարէիցն եւ զառաքելոցն մանաւանդ եթէ գնոյն ինքն Տեառն բանն որ է Տէր առաքելոց եւ մարգարէից, եւ այլ զիւր զգուշաւոր խրատ, զի այս են պատուիրանք որ լուսաւս են զամենայն հոգի, մանաւանդ զայնոսիկ որ լսեն եւ ի միտ անունն ըստ այնմ զոր առաքելոց ասէ. Ոչ եթէ լսելիք արգարացին այլ անելիք:

Չայ ստացայ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ եղբաւր իմոց եւ առաջնորդի տեառն Յովհաննիսի բնորեալ քաւչապետի. ի յիմ արդար վաստակոց արձան յաւիտեանական առաջի Աստուծոյ եւ մարդկան. զի սովորութիւն է աշխարհասիրացն որ ազգի ազգի հնարս գտանեն վասն կենցաղոյս յառաջանալոյ. նոյնպէս եւ մեզ պարտ է հնարս գտանել վասն հանդերձելոցն, զոր զսա գտայ զեզ եւ փրկութիւն անձին իմոյ, ուսումն մանկութեան եւ վայելիս կենաց իմոց:









